

## Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՈՂ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

### Հարց 1

Ինչի՞ հիման վրա է իրականացվում կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիների սպասարկումը՝

- երթուղու սխեմայի և չվացուցակի հիման վրա:

(«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, 10 հոդված 1-ին կետ)

### Հարց 2

Ո՞վ է կազմակերպում և անցկացնում միջմարզային ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումների մրցույթները՝

- Լիազոր մարմնի կողմից կազմած մրցութային հանձնաժողովը:

(«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, 11 հոդված 2-րդ կետ)

### Հարց 3

Ո՞ր իրավական ակտով է սահմանված ավտոբուսային կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների երթուղու իրավունքից զրկելը՝

- «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքով:

(«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, 12 հոդված)

### Հարց 4

Ո՞ւմ կողմից է իրականացվում Հայաստանի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզավորումը՝

- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից:

(ՀՀ կառավարության 11.02.2014թ 1471-Ն որոշում)

### Հարց 5

Ի՞նչպես է իրականացվում «էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեությունների լիցենզավորումը՝

- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

(«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 8)

#### **Հարց 6**

Ո՞վ է սահմանում էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի զարգացման քաղաքականությունը և Հայաստանի Հանրապետությունում համընդհանուր ծառայությունների մատուցման քաղաքականության նպատակները՝

- իրավասու մարմինը՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը:

(«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 4)

#### **Հարց 7**

Ի՞նչ են փոստային վճարման պետական նշանները՝ համաձայն «Փոստային կապին մասին» ՀՀ օրենքի՝

- փոստային նամականիշերը, ֆրանկոմեքենաների և նիշավորող մեքենաների դրոշմներ, որոնք գործողության մեջ դրվում են փոստային կապի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի կողմից և հաստատում են փոստային կապի ծառայությունների մատուցման վճարումները:

(«Փոստային կապի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 3)

#### **Հարց 8**

Ո՞ր դեպքում իրավասու մարմինը կարող է ուսումնասիրել և ստուգել ռադիոհաղորդակցության սարքավորումների օգտագործումը՝

- Համապատասխան թույլտվության առկայության դեպքում իրավասու մարմինը կարող է ուսումնասիրել և ստուգել ռադիոհաղորդակցության սարքավորումների օգտագործումը:

(«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 4)

#### **Հարց 9**

Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում ստանդարտներ մշակելու համար ու՞մ հետ է խորհրդակցում իրավասու մարմինը՝

- իրավասու մարմինը խորհրդակցելով Կարգավորողի հետ ընդունում է ստանդարտներ:

(«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք հոդվ. 4)

#### **Հարց 10**

Որ դեպքերում կարող է սահմանափակվել տեղեկատվության ազատությունը՝

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում:

(«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք հոդվ. 6, կետ 3)

#### **Հարց 11**

Ո՞վ է իրականացնում ռադիոհաղորդակցության սարքավորումների օգտագործման հետ կապված տեխնիկական բնույթի գործառույթները՝

- իրավասու մարմնի ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

(«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք հոդվ. 4)

#### **Հարց 12**

Ի՞նչ է փոստարկը՝ համաձայն «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի՝

- Հասարակ նամակների և փոստային բացիկների հավաքման համար նախատեսված հատուկ փակվող արկղ է:

(«Փոստային կապի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 3)

#### **Հարց 13**

Ինչ իրավական ակտով է սահմանվում ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների կառավարման, տնտեսական, իրավական և կազմակերպական հիմքերը՝

- ՀՀ օրենքով:

(«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի գլուխ 1, հոդված 1)

#### **Հարց 14**

ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների լիազոր պետական մարմինը ով է հանդիսանում՝

- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն:

(ՀՀ կառավարության 14.07.2000թ. թիվ 401 որոշում)

#### **Հարց 15**

Ըստ նշանակության դասակարգման, որ ճանապարհներն են կապում հանրապետության քաղաքները մայրաքաղաքի և միմյանց, մշակութային, հոգևոր կենտրոնների և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հետ՝

- հանրապետական նշանակության:

(«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի գլուխ 1, հոդված 3)

#### **Հարց 16**

ՀՀ մուտք գործող ծանրաքաշ և մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների համար ով է վճարը գանձում՝

- ՀՀ մաքսային մարմինները:

(«Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքի գլուխ 3, հոդված 10)

#### **Հարց 17**

Կատարվում է արդյոք գանձում բանավոր հարցումներին պատասխանելիս՝ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի՝

- գանձում չի կատարվում:

(«Տեղեկատվության ազատության մասին» հոդված 10, կետ 2)

#### **Հարց 18**

Ինչ իրավական հիմքերով է կարգավորվում ավտոտրանսպորտային կազմակերպությունների գործունեության ստուգումների գործընթացը՝

- «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպություն-ներում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով:

### **Հարց 19**

Որ իրավական ակտով է կարգավորվում ուղևորների կանոնավոր փոխադրումների սպասարկման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում՝

- ՀՀ կառավարության 16.08.2001թ. թիվ 762 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգի»:

(ՀՀ կառավարության 16.08.2001թ. թիվ 762 որոշում)

### **Հարց 20**

Որ իրավական նորմատիվ ակտով է սահմանված տրանսպորտային բոլոր տեսակների համար պետական ծրագրերի հայեցակարգերի մշակման ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության լիազորությունները՝

- «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքով:

(«Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, հոդված 5 կետ 2 «գ»)

### **Հարց 21**

Որ իրավական նորմատիվ ակտով է սահմանված ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության իրավասությունները նորմատիվ իրավական ակտերի կատարման վերահսկողության հարցում՝

- «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքով:

(«Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, հոդված 5 կետ 2 «է»)

## **Ֆարց 22**

Որ իրավական ակտով է սահմանված տրանսպորտի բոլոր տեսակների գործունեությունը կանոնակարգող նորմատիվ եւ տեխնիկական նորմատիվ ակտերի մշակումն ու հաստատման հարցում ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության իրավասությունը՝

- «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքով:

(«Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, հոդված 5 կետ 2 «գ»)

## **Ֆարց 23**

Որ իրավական նորմատիվ ակտով է սահմանված տրանսպորտի բոլոր տեսակների տրանսպորտային շահագործման տեխնիկական նորմերի ու ստանդարտների մշակման իրավասությունները՝

- «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքով:

(«Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, հոդված 5 կետ 2 «բ»)

## **Ֆարց 24**

Որ իրավական նորմատիվ ակտով է սահմանված տրանսպորտի ոլորտում տեղեկատվության համակարգման, վերլուծության եւ կանխատեսման իրավասությունները՝

- «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքով:

(«Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, հոդված 5 կետ 2 դ)

## **Ֆարց 25**

Ով է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի հիմնադիրը համարվում է.

- ՀՀ կառավարությունը:

(«Պետական կառավարչական հիմնարկի մասին» ՀՀ օրենք հոդված 7 կետ 1)

### **Հարց 26**

Ինչ իրավունքով են տրամադրվում ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի հողերը՝

- ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի հողերը տրամադրվում են անհատույց օգտագործման իրավունքով:

(«Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենք հոդված 14)

### **Հարց 27**

Ու՞մ հետ է նախապես հանաձայնեցնում Կարգավորողը հանրային էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում լիցենզավորված անձի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելու համաձայնությունը՝

- Իրավասու մարմնի հետ:

(«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք հոդվ.14)

### **Հարց 28**

Համաձայն «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի ո՞րն է համարվում փոստային առաքանի՝

- Հասցեագրված նամակագրական թղթակցությունը, փոստային ծանրոցները և բեռնարկերը, համապատասխան փաթեթավորումով տպագիր հրատարակությունները համարվում են փոստային առաքանի:

(«Փոստային կապի մասին» ՀՀ օրենք, հոդվ.3)

### **Հարց 29**

ՀՀ-ում ով է իրականացնում տրանսպորտի ոլորտի նորմատիվ իրավական ակտերի կատարման վերահսկողությունը՝

- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը:

(«Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, հոդված 5)

### Հարց 30

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում ինչի՞ հիման վրա է լիցենզավորող մարմինը ընդունում իր որոշումները՝ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի՝

- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում լիցենզավորող մարմինը իր որոշումներն ընդունում է համապատասխան եզրակացության հիման վրա:

(«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 1)

### Հարց 31

Ե՞րբ են լիցենզավորող հանձնաժողովի նիստերը համարվում իրավազոր՝ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի՝

- Լիցենզավորող հանձնաժողովի նիստերը համարվում են իրավազոր, եթե դրանց մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

(«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, հոդված 40)

### Հարց 32

Ով է մշակում և իրականացնում երկաթուղային տրանսպորտի բնագավառի պետական քաղաքականությունը.

- երկաթուղային տրանսպորտի բնագավառի պետական քաղաքականությունը մշակում և իրականացնում են ՀՀ կառավարությունը և նրա լիազորած պետական կառավարման մարմինը:

(«Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, հոդված 6)